



Թեան և արդարութեան արժանա- նալը, Շէրիի և օրէնքի ամբող- շական գործադրութիւնը, մեր պետութեան փառքին ու զօրու- թեան հիմնքուն ամրապնդումը ու մեր երկրին նիւթական և բարոյա- կան յառաջդիմութեանց և կատա- րելագործութեանց աստիճանին հաս- ցնելու միջոցները ապահովելը : Մեր Սահմանադրութիւնը Բարձրե- լոյն շնորհիւ մեր այս անկեղծ փա- փաքը իրագործելու երաշխիք մը ըլլալուն, ամէն պարագայի մէջ Աս- տուծոյ նախախնամութեան ապուր- նելով և սահմանադրութեան որա- մագրութեանց ձեւնարկելով պիտի ջանանք որ բացատրուած նպատա- կը իրականանայ : Կատարելագէտ վստահ եմ թէ մեր այս ջանքերուն պիտի մասնակցին և պիտի աշակցին բոլոր նախարարները, Ազգ. Ընդհ. Ժողովը և բոլոր պաշտօնեաները : Կարգ մը անցերու մէջ երեւոյն եկած շիտթութիւնները իրապէս մեզ ցա- պատճառելուն, մեր երկրին մէջ ան- գործութեան ամրապնդումը և մեր հպատակներուն միջև ամէն կարգի տնտեսամասնութեանց բոլորովին վերջուիլը ամենակարեւոր գործ մը նկատուելուն, անկեղծ օրէնք կը բաղ- ձանք որ նախ և առաջ այս մտքին հարկ եղած ազգու միջոցներուն դի- մուի, և այս կարգի ցաւալի դէպ- քերուն վճարագէտ վերջ մը տրուի : այլ և այլ ժողովուրդներ փոխադար- ձարար միեւնոյն հայրենիքի գաւառնե- րուն արժանի եղանակով բարեւոք յարաբերութիւններ աստեւն, ինչ որ ճշմարտապէս կը դնանտեւնք, նաև ամէնքն ալ անխորտի արդատութեան, հաւասարութեան և արդարութեան շնորհէն օգուտ քաղեն, բանակն ու նաւատորմը կատարելագործուին, դատական և էլմտական գործերը կանոնաւորուին, կրթութիւնը ընդ- հանրանայ, հանրօգուտ գործերն ու վաճառակառնութիւնը, երկրագոր- ծութիւնը և արհեստները՝ դարուս յառաջդիմութեանց համաձայն զար- գանան, օրէնքներէն և կանոննե- րէն անոնք որ տակաւին չեն պատ- րաստուած, սահմանադրութեան և մեր ազգին իրական օրինաւոր պէտ- քերուն համաձայն պատրաստուելով, այս մասին իրական գործողութիւն մը ցոյց տրուի, բարեկամ պետու- թեանց հետ կնքուած բոլոր դաշ- նագիրներու արամագրութիւնները մեր կողմէն հաստատուած ըլլալով, ատենց լաւ ընթացքին ուշադրու- թիւն ընծայուի, և մեր պետու- թեան բոլոր պետութեանց հետ ու- նեցած բարեկամութիւնը ամրապնդ- ուի և հաստատուի : Բարձրալին Աստուած ամէնուն ջանքերն ալ պը- սակէ :

ՄԷՂՄԷՏ ՌԷՇԱՏ

11 Բէպիւլ Արէր 1327

ԲԱՏ ՆԱՄԱԿ

« Արշարյս » ի բաժանորդներուն կը խնդրուի մեր մինչև ցարդ չ'վճարող բայց յարգելի բաժանորդ- ներէն, որպէսզի բարեհաճին ա- ռանց մեր ուղղակի դիմումին սպա- սելու, իրենց բաժնեգրները զրկել  
 Rédaction du Journal ARCHA- LOUYCE հասցեով :

ԾԱՆՈՒՑՈՒՄ ԱԶՍՏՈՒԹԵԱՆ ԲԱՆԱԿԻՆ

Թէև ծանուցուեցաւ որ բանա- կը առանց ո և է կուսակցութեան յարած ըլլալու շարժած է, բայց կ'երևայ թէ այս ծանուցումէն տա- կաւին ամէն կողմ և ամէն ոք տե- ղեկութիւն չունի : Աւրիշ անդամ կրկնելու պէտք չ'տրուաւ պայմանա- կը հաստատուի և կը կրկնուի թէ բանակը՝ վերջին զինուորական շար- ժումին մէջ ո՛չ մէկ կուսակցութեան և Բոմբիթէի քաղաքական մտքերուն գործիք չ'ըլլալով, մի միայն բա- ցարձակ վտանգի ենթարկուած մեր օրինական Սահմանադրութիւնը ամ- րապնդելու և հաստատելու սկզբ- բունքին հետապնդած է, և դոճու- թիւն Աստուծոյ, յաջողած է : Բա- նակը՝ յեղափոխութեան սկիզբին բռնակալութիւնը փճացնելու համար ոգի ի բռնի ջանքեր թափած Մի- ութեան Յառաջդիմութեան Բոմբ- թէին հետ ընկերակցաբար աշխատած է թէև, բայց մեր Օսմ. Սահմանադ- րութեան հաստատուելուն վրայ, այդ Բոմբիթէին հետ անեւ կարգի կուպ կտրած է :

Այժմ բանակը ազգին բանակն է, և գործադիր միջոցն է կառավարու- թեան՝ ո՛ր կուսակցութեան ալ պատ- կանի անիկա, բաւական է որ մեր Սահմանադրութեան համաձայն կաղ- մուած և երեսի. Ժողովոյ վստա- հութիւնը գրաւած ըլլայ :

Բանակին մէջ քաղաքական կու- սակցութեան նախընտրութեան կամ յարուսի բնաւ երբէք տեղի չ'պիտի տրուի, և անոնք որ այդ կուսակ- ցութիւններէն մէկուն մշտապէս յարած կը մնան բանակին մէջ չ'պիտի պահուին : Բացարձակապէս կը ծա- նուցուի և կ'ազդարարուի որ ազգին անհատները՝ բանակին այս անկողմա- կալ և ճշմարիտ դիրքին տեղեկա- նալով անպատշաճ դիմումներէ, մեկ- նութիւններէ և ընթացքներէ ետ կենան :

Կ. եւ շարժման քանակի հրամա- նատար  
 Ա. ՖԷՐԻԿ ՄԱՂՄՈՒՏ ԵՒՎԷԹ  
 19 Ապրիլ 325

ՍԻՆԷՄԱԹՕՎՐԱՖ ՎԷՆԻՒՍ

ՏԷՐ ԵՒ ՏԵՕՐԷՆ ԵՐՈՒԱՆԻ ԴԱՒՍՏԵԱՆ  
 Պուլցի ևստիպասակ դիւանք քրտակէյի  
 գծիկ վրայ  
 ՆՈՐ ԲՐՕԿՐԱՍ

Հ Ի Լ Մ Ի Փ Ա Շ Ս

Ռիւթէրի վերջերս տուած տեղեկութեան վրայ թէ՛ անկար- գութիւնները զսպելու համար Ատա- նա զրկուած 1000 զօրքերը կօշու- պուտի և աւարաւուութեանց մաս- նակցած են, Տեղւոյ Օսմ. գոմիտե- րութեան կողմէ՛ հեռագրաւ տեղե- կութիւն ուղարկած էր, որուն ի պա- տասխանի Մեծ Եպարքոս Հիլմի բա- շա հեռագրաւ հետեւեալ պատաս- խանը տուած է՝ Նուրի պէյին, որ բոլոր տեղական թերթերը հրատա-

րակած են և մենք ալ կարճանազ- րենք զայն իբր տեղեկութիւն :

« Ատանա զրկուած զինուորնե- րուն վերագրուած աւարաւութեան խօսքերը բացարձակապէս անհիմն և զրպարտութիւն են : Բ. և Գ. չորարանակէն՝ կարգը վերահաստա- տելու համար հսն զրկուած զինուոր- ները, չէին կրնար այդպիսի շար- գործութիւններու զիջանիլ :

« Հանդարտութիւնը և կարգա- պահութիւնը կատարեալ է Ատանայի մէջ :

« Գալով վերջին դէպքերուն մէջ յանցապարտ եղողները գատելու խնդրոյն, զինուորական ատեան մը կազմուած է սպաներէ և բարձրաս- սիճան զինուորականներէ, որոնք ընդ հուպ պիտի մեկնին պօսէն » :

« Արկածեալներուն անմիջական պէտքերուն յատկացուելու համար մէկ միլիոն զօրք զրկուած է » :

« Գահիրէէն Ատանայի Առաջնորդ Մուշեղ Եպիսկոպոսի կողմէ տրուած հեռագիրը, որուն հաւաձայն իբր թէ կոտորածները և հրդեհը կը շա- րունակուին տակաւին, անհիմն է » :

Մեծ Եպարքոս Հիլմի

ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԸ

Արքեօք Բնչ կանցնի կը դառնայ հիմա Սուլթան Ապտիւլ Համիտի գլխուն մէջ, իր արտարաւայրը : Այս հարցու- մին կը պատասխանէ Ա. Պալեանի «Սուլ- թան Համիտ Բնչպէս մեռաւ » գրքիչը. գին մէկ ֆրանք :

« Ատանայի կրկնուած կոտորածը պարզ կրկնութիւնն է Աւրֆայի կոտո- րածին, որուն քսամեցուցիչ պատմու- թիւնը կարգաւ նոյն հեղինակին «Բըր- քուհի » գրքովու, գին 50 Մանթիմ :

Mr. A. Balian  
 Le Caire  
 Egypte

ՆՈՐ ՍՈՒԼԹԱՆԸ

« Տէյի Բրոնիլ » ի թղթակիցը Ենվիէթ բաշայի միջնորդութեամբ Մեհմետ Ե. Սուլթանին ներկայա- ցած եւ հետեւեալ խօսակցութիւնը սեղի ունեցած է :

Սուլթանը ըսած է. — Ամբողջ ազգիս համար վայրկեանը ամենա- մեծ կարեւորութիւն ունի. թշնա- միներս զրպատած են զիս : Ըսած են թէ ինկած կորած մարդ մըն եմ, տկարամիտ և տարիներով մարդու երեսէ զուրկ և արգելափակ : Բայց Աստուած իր անհասանելի կամ- քովը ա՛յնպէս կամեցաւ որ զիս հի- մայ կոչեց իմ ճակատագիրս լրացը- նելու և իսլամական աշխարհին տի- րապետելու : Մամուլը բարձր պաշտօն մը ունի կատարելիք : Սուրը հզօր է, բայց դրկը ա՛լ աւելի հզօր է : Կը խնդրեմ որ իմ կողմէ համօրէն աշխարհի ուղղէք հետեւեալ խօսքս :

« Ես միշտ համարուած, կրակոտ համակիր մը եղած լուսաւորութեան, ազատութեան և յառաջդիմութեան Պաշտօնի գլուխը կ'անցնիմ պարտա- ւորութիւններու բովանդակ դի- տակցութեամբ, և Աստուծոյ օգնու- թեամբ պիտի քալեմ անխտոր պար- տաւորութեան ճամբէն և պիտի աշխատիմ արդար ու քննիչ ըլլալ բոլոր մարդոց հանդէպ, իսլամ և

ոչ-իսլամ : Չայնս լուած է 33 տարիէ ի վեր, բայց խղճին ձայնը երբէք լուսութեան չի՛ դատապարտուիր : Թէև հոս փակուած, բայց կերպով մը յաջողած եմ արտաքին աշխարհի յառաջդիմութեան հետ շփման մէջ մնալ : Դժբաղդութեանս միջին օրե- րուն ինծի հաւատարիմ մնացող սա- կաւթիւ համակիրներ գիտեն թէ ես սկիզբէն ի վեր Ղուրանին պատ- ուիրաններուն համապատասխան, սահմանադրութեան և խորհրդարա- նական հաստատութիւններու պա- հանջող եղած եմ : Հիմակ ալ հա- մարմն փոխուած չէ և կը հաշա- կեմ զայն, հիմակ ալ ինչպէս ա՛յն միջոցին երբ իբրև երկրտեսարգ կը փափաքէի արևմտեան քաղաքակը- թութեան և մէթոսներուն ծանօ- թեանալ : Ժէ՛ծ թիւք քաղաքակա- նութեան ամրապնդք յարող մըն եմ :

ՄԱՆՐ ԼՈՒՐԵՐ

— Ապտիւլ Համիտ Սելանիկ ժամանելու զիջելուան առտուն կա- նուխ արթննալով զիտեր է շրջակայ գեղատեսիլ գեղանկարը : Զինուո- րական պահակներ հետաքրքիրները կը հեռացնեն Սլլադիինի ամարանո- ցին շորս կողմերէն : Սելանիկի մէջ կը յայտարարուի թէ՛ Համիտ չ'պի- տի դատուի, այլ մեկուսացման մէջ պիտի պահուի, կեանքը երաշխա- լորուելով :

— Օսմ. Գոմիթէին կեդրոնը մեծ վտւթով Ապտիւլ Համիտի իշ- խանութեան մէկ յիշատակաղիւրը կը պատրաստէ, որով կ'ապացուցուի Համիտի յանցաւորութիւնը Միտ- հատ փաշայի սպանութեանէն մինչև հայրական վերջին կոտորածները : Այս յիշատակաղիւրը բոլոր Եւրոպական տէրութեանց պիտի բաժնուի և ամ- բողջ երկրին մէջ պիտի տարածուի :

— Ժուռնալ Տր Սալոնիկ կը գը- րէ թէ՛ Համիտի հետ կը դաժնուին 17 տարեկան Ապտիւրահիմ և 4 տարու Ապիտ անուն տղաքը, Մա- տեհագարանապետ Մոհամեդ Պէյ, Միւ- սահիպ ձէվէթ Ազա, Բեռայրը՝ Զէր- քէյ Մէհմետ փաշա, Խահուէճի պա- չի Ալի և մառանապետ Սըտգի Պէյ : Երկու ներքինի, երեք խոհարար, երկու Տիկին, երեք աղջիկ, եօթը նաժիշտ : Իսկ Պուրհաննէտտին էֆ. չ'կրնալով փախչել, Կէօզլէթէ մը- նացած է, և գտնուած տունը հըս- կողութեան ներքև է :

— Բ. դուռը բացարձակապէս կը մերժէ Ֆէրիհանա իշխանին « Պուլկարներու թագաւոր » տիտ- ղոսը, այլ կուղէ միմիայն « Պուլկա- րիոյ թագաւոր » տիտղոսով ճանչ- նալ :

Դուռը կաւարկէ թէ՛ առաջինը այսինքն « Պուլկարիոյ թագաւոր » յորժորջուճը, իրաւունք պիտի տայ անոր Մակեդոնիոյ Պուլկարներուն վրայ ալ իշխելու :

Այս լուրը միջադէպը հաւանա- կան է որ վերջերս կնքուած Թուր- քո- Պուլկար Իրթօքօլը վտանգէ :

Բ. դուռը երրեակ նիզակակից անթութեանց դիմած է այս մասին Սօֆիայէն բացատրութիւններ պա- հանջելու համար :  
 — Բ. Դուռը խիստ միջոցներ ձեռք աղաւ Տիարպէքիի ընդհանուր

կառավարիչ Սիւլէման Բաշայի, և զինուորական հրամանատար Լուսթֆի Բաշայի գեմ, որոնք ամբաստանուած են հակառակմանադրականները քաշալեբրած ըլլալու յանցանքով :

Ա.Ձ.Գ.Ա.Յ.Ի.Ն. Ե.Ո.Ր.Ր.Յ.Ր.

ԱՂԵՏԵԱԼՆԵՐԸ

Կրկին թիմերու արկածեալներուն նիւթական օգնութիւն հասցնելու համար, Տիկնայք Բարթօն տը Վիար, Կ. Բրիվա և Թադլա բաշա, խոստացած են իրենց օժանդակութիւնը բերել Այն. Տիկն Առաքել Պէյ Նուպարի նախագահութեամբ կազմուած Տիկնայից Մասնախմբին :

Պուլազի Ալգալին վարժարանին մէջ նախընթաց օրը գումարուելով Տիկնայից Մասնախմբը՝ կարեւոր որոշումներ ըրած է : ՀԱՆԴԻՊՈՒՄ Անցեալ օր պատահաբար իրարու հանդիպեցան Գերապ. Տէր Ներսէս Ծ. Վրդ. Խարախանեան և թերթիս Բարոտղարը, և ի մէջ այլոց, խօսակցեցան Ն. Գերապատուութեան Աքորտիկից եղբոր ի Բրիտոս, հանգուցեալ Տ. Վեռնի Եղիսկոպոս Երջմանեանի միջև Ա.Ք.Ս.Ս.Ս. Կե.Ա.Ն.Բ.Ը երկին տարագրութեան առթիւ տեղի ունեցած Միջնակարգ Կե.Ա.Ն.Բ.Ը վրայ :

Մշտ Գեր. Առաջնորդը, իր մտաւրտ մեկնման առթիւ, Տ. Թորոսեանի յայտնած փախարհին վրայ իր Լուսանկարը նուիրեց : ԿՈՉ ԵՒ ԹՈՒՈՒՑԻԿ Խմբագրութիւնն ստացաւ Գահրէի Հնչակեան մասնաճիւղէն և ԿՈՉ ԵՒ, որ ու է յայտնի ստորագրութիւն չէր պարունակէր, ինչպէս կերէի, առ ի չգոյէ մի ինչ որ անձնուէր : Հնչակեանի, և ԹԼՈՒՈՒՑԻԿ ՄԸ՝ թիւ 1, երկու ծանօթ աղբալինոց ստորագրութեամբ :

Առաջիկային այս խնդրով զբաղելու համար, թուուցիկը մեր այսօրուան թուով, կ'արտագրենք : ՄԻԱ.Բ. ԸՆԻ. ԺՈՂՈՎՈՅ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ (Շարն. Ապրիլ 11 և 14 նիստի արձանագրութեանց.)

Գ. Նկատելով որ Սահակաբեղայ Սարգիսեանը. որ ազից առաջ ընկերացած էր Գալլքեան աւազակախումբին և անոնց հետ փախած էր ի Ռէմէ և անտի ի Գալպէ : Անցեալ նիստերու մէջ երբ Գալլքեան իր սինդիքոր ընկերներով վտարուեցաւ ի միաբանութենէ, այն ատեն Սահակ Արեղայ պատրուակաւ մը բաժնուելով անոնցմէ կրկին Երուսաղէմ կուգայ, և լաւով ու աղաչելով մեղաւորութիւնը մատուցանէ. լի է ինքը անգիտութեամբ խաբուած և հետեւած է անոնց. այս պատճառաւ թախանձանօք կը խնդրէ, որ իր անդիտութեամբ դորձած մեղաց ներում չընորհուի : Տ. Յարութիւն Ս. Պատրիարքը հայրաբար կը ներէ այդ ապախարհող մեղաւորին, այնուհետեւ Սահակ Արեղայ երկրորդ խնդրագրով մը կ'ապաշէ որ, զինքը Դամասկոս ժամարար լըկեն, Ս. Պատրիարքը և Պատ. Տնօր. Խորհուրդը այն ալ կընդունին, Սահակ Արեղայ գոյքերը կը հաւաքէ և կ'ընէ ի

Յուպպէ, և հոն ( ի Յուպպէ ) Տնօր. Ժողովէն կարգուած տեսուչը տեղացի քանի մը սինդիքոր մեխանիկներու և պախալներու ձեռքով հանել կուտայ և քօխուղղով հազար իշխան : Ինքզինքը տեսուչ կընէ, Յուպպէ հասնող ուխտաւորներու և տեղացիներու միջև ահապին խռովութիւն և գայթակղութիւն յառաջ բերել կ'սկսի. կարհամարհէ և կը հայհոյէ Պատրիարքը և միաբանութիւնը և ոչ մի բան չը ճանաչէր : Ահա այս պատճառաւ Միար. Ընդհ. Ժողովը նոյն անպակառը, միաձայնութեամբ, կարգաւոր ձեռնարկեց և կոչեց իր աշխարհական անունովը Իգնատիոս Սարգիսեան և արդէն յառաջ վարդապետութեան ոչ չնորհք ունէր և ոչ արժանիք մը, քանի մը տարիներ առաջ Պոլսոյ մէջ օտարիչի աշակերտ եղած է. անկից կերթալ Ալգէքսանդրիա սիվիլիզի ոստան կը բռնուի. և երկար օրեր հրեանդանոցները դարձանուելէ յետոյ, Երուսաղէմ կուգայ. և ի Ս. Յարութիւն որճեփ կըլլայ. և սակայն բազմի կոյր բերմամբ քիչ ժամանակէն Սարգիսեան և վարդապետ կըլլայ, Գալլքեան լիբերու թիւր աւելցնելու համար. և այսօր ալ բընայինը կըլլան իսպառ :

Գ. Նկատելով որ Յարութիւն Սարգիսեան Վանաւեան երբէք զգատանալիք չունի, իր քսու բնառութեամբը միշտ խռովութեան, կըրուայ առիթ և պատճառ կը դառնայ, և նոյն իսկ այս վերջերս ուխտաւորաց մէջ այն տեսակ գայթակղութիւններ սերմանեց, որ քիչ մնաց վանքը արիւնով սղորուէր, այս և ասոր նման տակաւին շատ մը պատճառներով զայն ևս կարգաւոր չընչակեց վերջնականապէս :

(Շարունակելի)

ՏՐՈՒՑ ԵՒ ՏՈՒՑ Ի ՆՊԱՍ ՍՈՎԵԼՈՅ

Table with 2 columns: Item description and Amount. Includes items like 'Ն. Վ. Պոլսո Բաշա Նուպար 200 Մօճ. Բաթրօք բաշա 97,50, Մ. ԷՖ. Անգրանիկեան 200, Մուսթաֆա Պէյ Բէֆաթ 100, Ապաէլրահման Պէյ Թահմի 40, Ալի ԷՖ. Հասան 40, Հրանդ ԷՖ. Ալատեան 30, Ահմէտ Համտի Պէյ 20, Ահմէտ ԷՖ. Հիւմի 20, Իպրահիմ ԷՖ. Ատհամ 20, Սալէհ Պէյ Թարիտ 20, Մահմուտ ԷՖ. Միւսթ. 20 Գումար 807,5 Գրմ. նախորդ ցանկերու 4154,75 Համագումար 4932,25

ՏԵՂԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

ԹԱՓԱՌԻՆԵՐԸ Եզրպտական կառավարութիւնը Օտար թափառաչողիկներուն համար պատրաստած օրէնքը գործադրութեան դնելու համար, Եզրպտոսի օտար Գեսպանատանց հետ բանակցութեան մէջ է : ԿՈՊՏՈՒԹԻՒՆ Ալգէքսանդրիայէն Մայիս 12 թուականաւ մէկըմիտը ի կը հեռագրեն Քէ՝ Անատուլէն Ալգէքսանդրիա հասած հարիւրի չափ հայ գաղթականներ, մեծագոյն մա-

սած կին և տղայ, բազմաթիւ կուպիա տեղացիներու կողմէ ծաղու և ծանակի աւարկայ դարձած են : ԳՈՂՈՒԹԻՒՆ Մաթարիէի դժին վրայ աշխատող երկաթուղւոյ երեք պաշտօնեաներ վարչութեան կողմէ իբրև դող ամբաստանուած են ; միևնոյն տոմսակը մէկ քանի ուղեորներու երթուղարձին դորձածած ըլլալուն համար :

ԱՆՉՆԱՊՊԱՆ

Տանիմարքի Գեր - Հիւպատոս Պ. Ալքիթա Տալ, որ միևնոյն ժամանակ Մանուրաի մեքենայագորութեան և ճուլարանի Մեծ աշխատանոցին վարիչն էր, անցեալ օր ատրճանակի հարուածով մը անձնապան եղած է :

ՀՐԴԻՉ

Բննիչ յանձնախումբ մը կազմուած է ստուգելու համար պատճառները և պատասխանատուութիւնը քանի մը օր առաջ Ռասէլ - Թիքի Պալատին մէջ պատահած հրդեհին : Գանալ Մահմուտիյէի թիւ 3 Պալատին մօտերը, Բրէնս Ալիզ Բաշա Հասանի սեփականութիւնը եղող ատաղձի մթերանոցին մէջ հրդեհ ծագած է նախընթաց օր, և հրդեհները ամբողջ գիշերը աշխատելով հալու կրցած են առկը առնել :

ԳՐՏՈՒՑՔՔՔՔ

Լօգանի Հայկազեան Վարժարանին Տնօրէն Մ. Նալբանդեան Sr. Գիտնքեանց Բաժնեկիր Երուսաղէմ 7 Յունիս. Թոր. Բաժնեկիր 1 1/2 Տօլար. Թոր. Բաժնեկիր 3 Բորչի. Հասցէ Mr. M. Nalbandian Institut Armenien (Suisse) Lausanne

ՀԵՆՈՒԱԳԻՒՄ

Սեղանիկ 10 Մայիս .- Օտար քրանսուներէն Ապսիւլ Համիսի պան տուած քրանսուներ գանձելու համար, Թայաք բաշա հոս հասաւ, որպէսզի Համիսիք ստորագրութիւնը առնէ :

Լոնտոն 10 Մայիս .- Կ. Պոլսէն Բաշա Բաշայի մը նայելով, Ժեօն-թիւրք Երիտասարդներու մեծանախարհեան և զինուորական իշխանութեան մէջ անհամաձայնութիւն կը տեսնուի :

Կարծողներ կան քէ այդ անհամաձայնութիւնը Երիտասարդներու ինքնուրուագիւն լուծումը առաջ պիտի քերէ, և այս պարագային ղեկարգութիւնները տեղի պիտի ունենան նստաշրջանի շրջանաւարտի Թորիս 14 ին :

Սօժիս 11 Մայիս .- Կառավարութիւնը Գալլքեանի անհամաձայնութեան շնորհիւ կը պահանջէ, անկախութեան հրահարակարգի հետեւանոց :

Կ. Պոլիս 12 Մայիս .- Նախարարաց խորհուրդը Աստուանի նախարար Վալի ձեմիս Պէյի հրահարակարգ Պոլիս վերադառնալ, Կոստանտնուպոլիս մերձակայից անհամաձայնութեան շնորհիւ զինուորական ստեւակի մը

առջիկ դասուելու համար : Կ. Պոլիս 12 Մայիս .- Գահարիս աշխարհի քաղաքներուն մէջ, հրահարակարգ տեղի ունեցաւ Բաշա Երիտասարդներու կախարհականութեան որոշման գործադրութիւնը :

Գրիսիզի 12 Մայիս .- Կիլիկիոյ կայսր և Բաշայի Էմմանուէլ քաղաքի աշխարհիկներ փոխանակեցին «Հոնէն Գոլլեմի» և «Վիգոր» Էմմանուէլ գրահարակարգի մէջ : Երկու վեհապետներու խօսակցութիւնը շատ երկար տևեց :

Կ. Պոլիս 13 Մայիս .- Չինուորական ասեանները քաղաքի կախարհական հանուածներէն, որիչ շատ մը վճիռներ առնակած է զանազաններու դէմ, աշխիքի ֆակի մը շարքը քանակաւ քանակաւ միևնոյն ց'կեանը սաժանակիր աշխատութիւն :

ՄԱՆՈՒՑՈՒՄ

Հայ Մուսայից առաջին շարքին մէջ իրաւամբ ընտիր տեղ մը կը գըրաւէ՝ հանրաժանութեամբ բանաստեղծ Մկրտիչ Աճէմեան իւր քերթուածներու ամբողջական հրատարակութեամբ՝ այս անգամ Տէր Ներսէսեան Տպարանէն «բանիչի» տպագրութեամբ ի լոյս ընծայուած :

Թիթրարքայի քնարին գոգարիկ թերթը հայեցի մատամբ թրթռացնող մեծանուն քերթողին այս նըուագները անոյշ տոխակին զմայլեցուցիչ դաշնակցութեամբ կը յեղեցնեն մեզ և չափազանցութեան դէմ բընաւ մեղանշած չենք ըլլար երբ քսենք թէ լուսագոյն ընթերցանութեան գիրքն է որ կընայ յատկացուել ոչ միայն ամէն դպրոցականի այլ նաև ամէն գրասէր հայու համար անխափր :

ԳԻՆ 12 ԴԻՉ

Վաճառման կեդրոնատեղին է Ղալաթիս - Գոլմիշի Օղլու Խան - Բիւզանդեան Գրատունը :

ՓՈՒՐՏՈՒՄ ԵՒ ԹԻՒ 1

Մարդիկ կան, որոնց մէջ նկարագրիչ այն աստիճան աշխատեցած է, որ չ'են վարանիք ո' եւ է սրբութիւն ոտնակոխ ընելու կամ ու է սկզբունք գեանահարկու, պայմանաւ որ այն արարքը համապատասխան ըլլայ իրենց անհատական շահերուն : Այս դատակարարը որ մարմնացումն է միանգամայն ամբարտաւանութեան եւ յաւակնտութեան, չափազանց արհամարհող հայեացք մ'ունի զէպի ժողովրդային հարազատ խաւերը, որոնք պատ իւր դատողութեան՝ միամիտներ են պարզապէս՝ զուրկ խորթափանց հայեցողութենէ :

Եւ այս աշխարհակ համոզմունք միացած կոյր փառամտութեան մը նետ կը մղէ զիրենք յաճախ զէպի վտանգաւոր ճամբաներ : Այս կերպով է, որ համայնքներ վարելու, ուղղութիւններ գծելու, գիւտնագիտական կնճառ հարցեր լուծելու ծանր հոգեբար կ'ստանաննն ատանց նկատի առնելու թէ՛ իրականութեան մէջ իրենց քիթէն անդին տեսնելու կարողութիւնն անգամ չունին : Եւ այսպէս ուրեմն, օգտուելով ժողովուրդի աննեղիկ ներողամտութենէն կը քաջընն ու կը քաջընն Գրիսից արհամարհելի գոյութիւնը ի վընաս այն համայնքին՝ որուն կը պատկանին :

Ամբողջացնելու համար այս զըգուելի էակները բնորոշող ընդհանուր գիծերը, պէտք է յիշել նաև թէ՛ երբ օրին մէկը պերճախօս ապացոյցներ քաղանքիկն ամօթալի արարքը, այս պարտնիքը՝ փոխանակ խղճահարուելու, փոխանակ զըջումի դառն արտասուքը թափելու՝ ինքնաբարարացումի կը մը

